ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՈՐՈՇՈՒՄ N 8/3

ք. Երևան 14 ապրիլի 2025 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿԻ ՆՈՐՄԵՐՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 49-րդ կետի 4-րդ ենթակետով և ԵՊՀ գիտական խորհրդի աշխատակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ ԵՊՀ գիտական խորհուրդը որոշում է.

1. ԵՊՀ գիտական խորհրդի կողմից 2020 թ. մարտի 12-ին հաստատված «ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմերում» (այսուհետ՝ նաև նորմեր) կատարել հետևյալ լրացումը:

2. Նորմերը լրացնել հետևյալ բովանդակությամբ.

Կետը	Աշխատանքի ձևը	Ժամանակի նորմերը	Ծանոթություն
1.	Հեռավար դասընթացի խորհրդատվություն	10 ժամ՝ 1 խմբին 1 կիսամյակի համար:	Խումբը՝ մինչև 75 ուսանող:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Հ. Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հաստատված է
ԵՊՀ գիտական խորհրդի
2020 թ. մարտի 12-ի թիվ 11 նիստում

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ
Գ.Գ. Գևորգյան

ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական և ուսումնամեթոդական բեռնվածության հաշվարկի նորմեր

	Աշխատանքի ձևը	Ժամանակի նորմերը	Ծանոթություն
1.	Դասախոսություն	1 ժամ հոսքին՝ 1 ակադեմիական ժամի համար:	Հոսքը՝ 60-75 ուսանող (մասնագիտացման կամ կամընտրական դասընթացի խումբը՝ 15 ուսանողից ոչ պակաս): Մագիստրատուրայում՝ հոսքն ու խումբը ոչ պակաս, քան 6 ուսանող ֆիզիկամաթեմատիկական ու բնագիտական և 10 ուսանող հումանիտար ու սոցիալ-տնտեսագիտական ծրագրերում:
2.	Գործնական պարապմունք	1 ժամ խմբին՝ 1 ակադեմիական ժամի համար:	Խումբը՝ 22 ուսանող, լեզվական խումբը՝ 20 ուսանող (Արևել. ֆակուլտետի 1-ին կուրսում մասնագիտական լեզվի խումբը՝ 12 ուսանող, Ժուռն. ֆակուլտետի «Ժուռն. Վարպետություն» դասընթացի խումբը՝ 15 ուսանող):
3.	Սեմինար պարապմունք	1 ժամ խմբին՝ 1 ակադեմիական ժամի համար:	Խումբը՝ 30 ուսանողից ոչ պակաս:
4.	Լաբորատոր պարապմունք	1 ժամ խմբին՝ 1 ակադեմիական ժամի համար:	Խումբը՝ 12-15 ուսանող (հատուկ դեպքերում՝ աշխատանքային անվտանգության պայմաններն ապահովելու նպատակով՝ 6-8 ուսանող ուսումնական հարցերով զբաղվող պրոռեկտորի թույլտվությամբ):

5.	Հեռավար դասընթացի[1] խորհրդատվություն	10 ժամ՝ 1 խմբին 1 կիսամյակի համար[2]:	Խումբը՝ մինչև 75 ուսանող: ***(5-րդ կետը լրացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 14.04.2025 թ. N 8/3 որոշմամբ):***
6.	Ստուգարքի ընդունում	0,25 ժամ՝ 1 ուսանողին կիսամյակի ընթացքում:	
7.	Ընթացիկ քննությունների ընդունում	0.25 ժամ՝ 1 ուսանողին 1 ընթացիկ քննության համար:	Հետազոտական բաղադրիչ ունեցող դասընթացի դեպքում՝ 0.5 ժամ միայն 1 ընթացիկ քննության համար:
8.	Հետազոտական բաղադրիչ ունեցող դասընթացի խորհրդատվություն	0,5 ժամ՝ 1 ուսանողին կիսամյակի ընթացքում:	Հետազոտական բաղադրիչ ունեցող դասընթացների թիվը ոչ ավել, քան 6:
9.	Եզրափակիչ քննության ընդունում	0,5 ժամ՝ 1 ուսանողին կիսամյակի ընթացքում:	
10.	Բակալավրիատի ավարտական աշխատանքի ղեկավարում	1 ավարտական աշխատանքի համար ուսումնառության ընթացքում՝ 20 ժամ, գրախոսության համար՝ 2 ժամ:	1 դասախոսը կարող է ղեկավարել ոչ ավել, քան 5 աշխատանք:
11.	Մագիստրանտի ղեկավարում (ներառյալ պրակտիկան և մագիստրոսական թեզը)	1 մագիստրանտի թեզի ղեկավարման համար՝ ուսումնառության ընթացքում 45 ժամ, գրախոսության համար՝ 4 ժամ, պրակտիկայի համար՝ 4 ժամ:	1 դասախոսը կարող է ղեկավարել 6 մագիստրանտից ոչ ավելի (3-ական՝ յուրաքանչյուր կուրսում): Ժամաբաշխումը կատարվում է ըստ կիսամյակների. *առկա ուսուցում.* 2 տարի տևողությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ 2-րդ կիս.– 5 ժամ, 3-րդ կիս. – 20 ժամ, 4-րդ կիս. – 20 ժամ, 1,5 տարի տևողությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ 2-րդ կիս. – 20 ժամ, 3-րդ կիս. – 25 ժամ, 1 տարի տևողությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ 1-ին կիս.– 20 ժամ, 2-րդ կիս. – 25 ժամ, *հեռակա ուսուցում.*

[1] Դասընթացների անվանացանկը սահմանվում է յուրաքանչյուր ուսումնական տարի ռեկտորի հրամանով:
[2] Հատկացվող ժամաքանակը լսարանային է:

			2,5 տարի տևողությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ 3-րդ կիս.– 5 ժամ, 4-րդ կիս. – 20 ժամ, 5-րդ կիս. – 20 ժամ 2 տարի տևողությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ 2-րդ կիս. – 5 ժամ, 3-րդ կիս. – 20 ժամ, 4-րդ կիս. – 20 ժամ, 1,5 տարի տևողությամբ կրթական ծրագրերի դեպքում՝ 2-րդ կիս. – 20 ժամ, 3-րդ կիս. –25 ժամ: ***(10-րդ կետը փոփոխվել է ԵՊՀ գիտական խորհրդի 26.05.2023 թ. N 13/2 որոշմամբ):***
12.	Ամփոփիչ քննություն բակալավրիատում	0.25 ժամ՝ 1 ուսանողի համար:	Հանձնաժողովի անդամների թիվը ոչ ավել, քան 6 հոգի, ռեկտորի, պրոռեկտորների ու դեկանների, փոխդեկանների մասնակցությունը՝ առանց լրացուցիչ վարձատրության:
13.	Ավարտական աշխատանքի պաշտպանություն	0.25 ժամ՝ 1 աշխատանքի համար:	
14.	Մագիստրոսական թեզի պաշտպանություն	3 ուսանողի համար՝ 1 ժամ:	
15.	Ասպիրանտի ղեկավարում	Տարվա ընթացքում՝ 70 ժամ 1 առկա ասպիրանտի, 50 ժամ՝ 1 հեռակա ասպիրանտի համար:	Պրոֆեսորն ու դոցենտը կարող են միաժամանակ ղեկավարել 5-ից ոչ ավելի ասպիրանտ ու հայցորդ: ***(14-15-րդ կետերը փոփոխվել են ԵՊՀ գիտական խորհրդի 26.05.2023 թ. N 13/2 որոշմամբ):***
16.	Հայցորդի ղեկավարում	Տարվա ընթացքում՝ 30 ժամ 1 հայցորդի համար:	
17.	Ուսումնական պրակտիկայի (ճանաչողական, թանգարանային, դաշտային, էքսկուրսիոն և այլն) ղեկավարում, այդ թվում՝ հաշվետվությունների ստուգում և ստուգարքի ընդունում	1 աշխատանքային օրում՝ 4 ժամ յուրաքանչյուր խմբին (դաշտային պրակտիկաների դեպքում՝ 6 ժամ):	Խումբը՝ 30 ուսանող (դաշտային պրակտիկաների դեպքում՝ 15):
18.	Մասնագիտական (արտադրական, գիտական, փորձարարական) պրակտիկայի ղեկավարում	1 շաբաթվա համար՝ 2 ժամ 1 ուսանողին	1 ժամը տրվում է այլ հաստատության կողմից նշանակված ղեկավարին:
19.	Մանկավարժական պրակտիկայի ղեկավարում. ա) խմբի ղեկավար (մասնագիտական առարկայի դասախոս-մեթոդիստ) բ) մանկավարժ, գ) հոգեբան:	ա) խմբի ղեկավարին՝ 4 շաբաթվա համար 30 ժամ, բ) մանկավարժին 4 շաբաթվա համար՝ 12 ժամ, գ) հոգեբանին՝ 4 շաբաթվա համար 8 ժամ:	Խումբը՝ 10 ուսանող: Խմբի ղեկավարը կարող է ղեկավարել 1 խումբ, մանկավարժն ու հոգեբանը միաժամանակ կարող են աշխատել ոչ ավել, քան 4 խմբի հետ:
20.	Մասնակցություն ԵՊՀ մեթոդխորհրդի աշխատանքներին	40 ժամ՝ յուրաքանչյուր անդամին ուստարվա համար, 50 ժամ՝ նախագահին ուստարվա	

		համար:	
21.	Մասնակցություն ԵՊՀ գիտական խորհրդի իրավական ակտերի նախագծերի մշակման և փորձաքննության հանձնաժողովի աշխատանքներին	30 ժամ՝ յուրաքանչյուր անդամին ուստարվա համար, 40 ժամ՝ նախագահին ուստարվա համար:	
21.1.	Մասնակցություն ԵՊՀ գիտակազմակերպչական խորհրդի աշխատանքներին	30 ժամ՝ յուրաքանչյուր անդամին ուստարվա համար, 40 ժամ՝ նախագահին ուստարվա համար:	***(21-րդ կետը լրացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 26.05.2023 թ. N 13/2 որոշմամբ):***
22.	Ֆակուլտետի մեթոդխորհրդի (ներառյալ ֆակուլտետի գիտական խորհրդի որակի ապահովման մշտական հանձնաժողովի) անդամակցություն	30 ժամ՝ յուրաքանչյուր անդամին ուստարվա համար 40 ժամ՝ նախագահին ուստարվա համար:	Մեթոդխորհրդի կազմում կարող է ընդգրկվել 3-4 անդամ:
23.	Ֆակուլտետի գիտական խորհրդի քարտուղար	40 ժամ՝ յուրաքանչյուր ուստարվա համար:	
24.	Ֆակուլտետի դասախոսների որակավորման բարձրացման պատասխանատու	20 ժամ՝ յուրաքանչյուր ուստարվա համար:	
24.1	Կրթական ծրագրի ղեկավար	Բակալավրիատում՝ 80 ժամ մեկ ուստարվա համար, Մագիստրատուրայում՝ 40 ժամ մեկ ուստարվա համար:	Ժամաքանակը ներառում է նույն ծրագրի ղեկավարումը առկայում ու հեռակայում միասին: ***(25-րդ կետը փոփոխվել են ԵՊՀ գիտական խորհրդի 26.05.2023 թ. N 13/2 որոշմամբ):***
25.	Դասալսում	Մեկ դասախոսի դասերը լսելու համար 1 ժամ ուստարում, բայց ոչ ավել, քան 20 ժամ ամբիոնին:	Դասալսումը կատարում է ամբիոնի վարիչը կամ պրոֆեսորը:
26.	Հետազոտական աշխատանք	50 ժամ՝ մեկ դրույքին մեկ ուսումնական տարվա համար	Ժամաքանակը հատկացվում է միայն հիմնական կամ ներքին համատեղությամբ (դրույքով) աշխատող այն դասավան-դողներին (բացառությամբ դասախոսի տարակարգի), որոնք մեկ ուսումնական տարվա ընթացքում պարտավորվում են ներկայացնել ԲՈԿ-ի համար ընդունելի գիտական պարբերականում տպագրված առնվազն մեկ գիտական հոդված:

			Նշված ժամաքանակը հատկացվում է միայն դասավանդողի համաձայնության դեպքում և կարող է փոխարինվել ԵՊՀ դասախոսական կազմի ուսումնական ու ուսումնամեթոդական բեռնվածությամբ նախատեսվող այլ ժամաքանակով: ***(27-րդ կետը լրացվել է ԵՊՀ գիտական խորհրդի 26.05.2023 թ. N 13/2 որոշմամբ):***

1. Ամբիոնի հաստիքացուցակը կազմվում է մեկ դասախոսին միջինում 700 ժամից ոչ պակաս բեռնվածությամբ:
2. Դասախոսների միջև ամբիոնային բեռնվածության բաշխումը կատարում է ամբիոնի վարիչը՝ դեկանի հետ համաձայնեցված. հաստատում է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը:
3. Ամբիոնային բեռնվածությունը պետք է համապատասխանի հետևյալ պահանջներին.
ա) պրոֆեսորի բեռնվածության մեջ դասախոսությունները պետք է կազմեն ոչ պակաս, քան 120 ժամ,
բ) դոցենտի բեռնվածության մեջ լսարանային (դասախոսություն, գործնական, սեմինար, լաբորատոր) ժամերը պետք է կազմեն ոչ պակաս, քան 240 ժամ,
գ) պրոֆեսորի, դոցենտի, ասիստենտի, դասախոսի բեռնվածության մեջ ստուգարքներին ու քննություններին հատկացված ժամաքանակը չպետք է գերազանցի 30 %-ը,
դ) ամբիոնի գործնական, սեմինար կամ լաբորատոր դասաժամերի հաշվին 2-րդ ու 3-րդ տարվա ասպիրանտին ուսումնառության ընթացքում պետք է հատկացվի 120 ժամ՝ որպես մանկավարժական պրակտիկա (յուրաքանչյուր ուստարում՝ 60-ական ժամ):

4. Ներքին ու արտաքին համատեղությամբ դասավանդելու համար հրավիրված մասնագետներին կարելի է ձևակերպել մինչև 0.5 դրույքով կամ ժամավճարային հիմունքներով: